ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՊՁԲ-7/25-1

ք. Երևան 17 .05. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար/հավելված N 2/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են՝ 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.8 Հանել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակների, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 64 674 840 (վաթսունչորս միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով սահմանված աշխատանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ, համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանայ պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Պահապան» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00882372
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Գ. ԿՅՈՍԱՊԵՏՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	«Պահապան» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	ГОСТ 19867-93: Արտինուլ-82007, 82039 կամ համարժեք կտոր: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն պլաստմասայից՝ կտորի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակների տրամագիծը 14 մմ՝ գլխիկավոր, մնացածը 11մմ-անոց՝ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի վրա պետք տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծ	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

2	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՌ	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՌ	«Պահապան» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Արտադրվում է 82007, 82039 արտիկուլի սև գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Կոկետկայի ներքևի եզրով և կրծքամասի գրպանների կափույրների վերին եզրերով անցկացված են 1,5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Բազկակալների վերին եզրերով անցկացված են 1,5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար, ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրները կոճկվում են ՋՈՒ զինանշանի պատկերով 14 մմ տրամագծով ոսկեգույն այումինե համաձուլվածքից գլխիկավոր կոճակներով, բազկակալները՝ մեկական սև գույնի 14 մմ տրամագծով գլխիկավոր ջերմակայուն կոճակներով, իսկ մնացածը՝ 11մմ-անոց ջերմակայուն պլաստմասայից երկու անցքով սև գույնի կոճակներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10

				հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի վրա պետք տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

3	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	«Պահապան» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	ГОСТ 19867-93: Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սև գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտածող: Մեջքը կոկետկայով՝ կոկետկայի, կրծքամասի գրպանների և թևքերի մանժետի վերին եզրերը մշակված է կարմիր երիզով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրները կոճկվում են ԶՈՒ զինանշանի պատկերով 14 մմ տրամագծով ոսկեգույն այլումինե համածուլվածքից գլխիկավոր կոճակներով, մնացածը՝ 11մմ-անոց ջերմակայուն պլաստմասայից երկու անցքով սև գույնի կոճակներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի վրա պետք տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

4	Վերնաշապիկ՝	Վերնաշապիկ՝	«Պահապան» ՍՊԸ	ГОСТ 19867-93: Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի

	Երկարաթև, սպիտակ ՌՈ	Երկարաթև, սպիտակ ՌՈ	Հայաստանի Հանրապետություն	սպիտակ գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Մեջքը կոնետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Կոնետկայի ներքևի եզրով և նրծքամասի գրպանների կապույրների վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Բազկակալների վերին եզրերով անցնացված են 1,5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրները կոճկվում են ՀՈՒ զինանշանի պատկերով 14 մմ տրամագծով ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից գլխիկավոր կոճակներով, բազկակալները՝ մեկական 14 մմ տրամագծով սպիտակ գույնի գլխիկավոր ջերմակայուն կոճակներով, իսկ մնացածը՝ 11մմ-անոց ջերմակայուն պլաստմասայից երկու անցքով սպիտակ գույնի կոճակներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի վրա պետք տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս-հասակային սանդղակ | Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
---	---	---	---	---	---	---	---	---	---	---	---
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100	 ГОСТ 19867-93: Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սպիտակ գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին ուղղահայաց շերտակարով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտածող: Մեջքը կոկետկայով, կոկետկայի, կրծքամասի գրպանների և թևքերի մանժետի վերին եզրերը մշակված է կարմիր երիզով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների կոճակները ՀՈՒ զինանշանի պատկերով 14 մմ տրամագծով ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից գլխիկավոր կոճակներով, իսկ մնացածը՝ 11մմ-անոց ջերմակայուն պլաստմասայից երկու անցքով սպիտակ գույնի կոճակներով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի վրա պետք տպագրված լինի
5	Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ ՌՈ	Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ ՌՈ	«Պահապան» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	

			տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Ծածկումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետ
1	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	հատ	7 300	3 594	26 236 200	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	հատ	3 320	4494	14 920 080	
3	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	հատ	3 320	4 488	14 900 160	
4	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	հատ	1 200	3 594	4 312 800	
5	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	հատ	1 200	3 588	4 305 600	

Ծանոթություն. *մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արգաիշտի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ՝	
1	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	հատ	7 300	3 594	26 236 200	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
2	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	հատ	3 320	4494	14 920 080	
3	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	հատ	3 320	4 488	14 900 160	
4	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	հատ	1 200	3 594	4 312 800	
5	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	հատ	1 200	3 588	4 305 600	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02.07. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 17.05.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատակարարել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17 247 720 (տասնյոթ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սույն Ապրանքի գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2. Գնորդը մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ Թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00882372
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագրին կից
№ 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքների մատակարարումը 2018թ. ըստ ամիսների, ընդ որում՝			
						հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր
1	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	հատ	2 500	3 594	8 985 000		1 000	1 000	500
2	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	հատ	760	4 494	3 415 440	380	380		
3	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	հատ	760	4 488	3 410 880	380	380		
4	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	հատ	200	3 594	718 800	100	100		
5	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	հատ	200	3 588	717 600	100	100		
	Ընդամենը	17 247 720 (տասնյոթ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ							

Ծանոթություն՝ մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

Հավելված N 2
№ ԲՄԱՊՁԲ-7/25-1 պայմանագրին կից
№ 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ	18331200/322/9/2		3 594 000	7 188 000	8 985 000	8 985 000	8 985 000
2	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ	18331200/326/9/2	1 707 720	3 415 440	3 415 440	3 415 440	3 415 440	3 415 440
3	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ	18331200/328/9/2	1 705 440	3 410 880	3 410 880	3 410 880	3 410 880	3 410 880
4	Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՈ	18331200/325/9/2	359 400	718 800	718 800	718 800	718 800	718 800
5	Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ ՌՈ	18331200/329/9/2	358 800	717 600	717 600	717 600	717 600	717 600

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372
տնօրեն

ՄԵԼԻՔ ՍԱՐԳՍՅԱՆ